ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

22.06. 2020թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը -մարզպետի տեղակալ
Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար
Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադլոյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին՝

ՈՒսումնասիրել 1 շաբաթվա ընթացքում սեփական եկամուտների հավաքագրման մուտքեր չունեցող համայնքները, անհրաժեշտության դեպքում կազմակերպել քննարկումներ համայնքների ղեկավարների հետ և վերահսկել բյուջեներ մուտքերի կատարման ընթացքը:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ներդրումային ծրագրերի ներգրավման և դրանց իրագործմանն ուղղված համակարգման աշխատանքներն իրականացնող փորձագետ Ռ.Մարգարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին, մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Յուրաքանչյուր շաբաթ ներկայացնել տեղեկատվություն սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և առաջացած խնդիրների վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին, մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնակատար Ա.Գասպարյանին՝

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել պարզաբանում ու տեղեկատվություն մարզի դպրոցների տնօրենների ընտրության կարգի և դրանում մարզպետարանի դերակատարության վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին՝

ա/ 1-շաբաթյա պարբերականությամբ վերլուծությունների հիման վրա ներկայացնել տեղեկատվություն Վանաձոր և Ալավերդի համայնքների բյուջետային մուտքերի և տնտեսումների վերաբերյալ.

բ/ Ամենամսյա հաշվետվություն ներկայացնել մարզպետարանի բյուջեի կատարման հսկողության վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչության պետի պաշտոնակատար Ժ.Ղազարյանին, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին՝

Համատեղ ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ սելավների հետևանքով վնաս կրած քաղաքացիների սոցիալական վիճակի վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

ա/ Կատարված ուսումնասիրությունների և հավաքված տեղեկատվության հիման Դսեղի ոռոգման համակարգի վերաբերյալ փաթեթը, անհրաժեշտության դեպքում, տրամադրել ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը:

բ/ Ուսումնասիրել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Լեռնապատ համայնքի գետի հունի քանդման և ծառերի տեղահանման վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Ուսումնասիրել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզի տուրիստական կենտրոններով կամ կետերով անցնող ճանապարհների վիճակի վերաբերյալ:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99/